շատ տեղ Հայ եկեղեցիներում, ուր դեռ մուտ չէ գործել Պօլսի վերջին (1834)՝ աւելի կատարեալ հրատարակութիւնը՝ յայտնի Տէր Իսրայէլի խմբագրած օրինակից։

14. Խլաթեցու վերոյիշեալ երկրասիրութիւնների վերայ աւելացնելու է և՝ մինչև այժմ մի քանի կարճ հատուածներով միայն ծանօթ՝ ներկայ «Ցիշատակարան Աղէտից»,[4] որ գուցէ Զամչեանի (գ. 451) յիշած «Պատմութիւն վկայից նահատակելոց ի ժամանակս իւր» գրուածքը լինի։ Սա

---

4. Այս գրուածքից բոլորովին տարբեր է Գրիգորի (հաւանականօրէն՝ Խլաթեցու) մի Տաղ. «Եկայք ողբասցուք,—Եղբարք զչարութիւն—Ազգի նետողաց»... եւ այլն. (Տե՛ս Ցուցակ հայ. ձեռագ. Ներսես. Հոգ. Դպրանոցի, էջ 15) որպէս եւ «Ճռաքաղի» 1861 թ. օգոստ.—սեպտեմբ. համարում Գրիգոր Երիցու նոյնպէս «Ցիշատակարան» կոչուած «Ցունըս թուով հարիւր եւ քսան», բայց աւելի ճիշտ 256 տող՝ աւելի կրօնական, քան պատմական ոտանաւորը՝ 1335 թ. գրուած, որ ասել է՝ թէ ոչ մի կերպ Խլաթեցու գործը չէ կարող լինել։—Մեր «Ցիշատակարանից» մի քանի համառօտ հատուածներ կան բերած միջամէջ վերը յիշած Ղեւոնդ վ. Փիրզալէմեանի «Նօտարք Հայոց» գրուածքում—էջ 5, 36 եւ 47՝ ընդամէնը 33 տող եւ Հ. Ղեւոնդ Ալիշանի «Այրարատում»—էջ 323—325՝ ընդամէնը 77 տող։